ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԲԷՑ ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
ՌԱԶՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

______________________________

«____» «__________» 2018թ

# ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրերի համարներ՝ P116748, P116199, P116748

Հաշվետու ժամանակաշրջան՝ հուլիս-դեկտեմբեր, 2017 թ.

Պատրաստված է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի համար

Կատարող՝
Համիկ Խաչոյան
Բնապահպան
26.01.20118

**Բովանդակություն**

Հապավումների ցանկ........................................................................................................2

1. Ներածություն.......................................................................................................3
2. Շինաշխատանքներ և ծրագրի առաջընթացը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում.........................................................................................................4
3. Դասընթացներ և Հանրության իրազեկում..............................................................5

3.1 Հաղթանակ ե/կ..............................................................................................5

3.2 Աշնակ ե/կ......................................................................................................5

3.3 Վանաձոր-1 ե/կ..............................................................................................6

4. Շրջակա միջավայրի մոնիթորինգ...........................................................................7

4.1 Մոնիթորինգ.....................................................................................................7

4.2 Մոնիթորինգային շրջայց «Հաղթանակ» ենթակայան թերությունների հայտնաբերում և ուղղիչ միջոցառումներ.......................................................................................8

4.3 Մոնիթորինգային շրջայց «Աշնակ» ենթակայան թերությունների հայտնաբերում և ուղղիչ միջոցառումներ.......................................................................................8

4.4 Մոնիթորինգային շրջայց «Վանաձոր-1» ենթակայան թերությունների հայտնաբերում և ուղղիչ միջոցառումներ.......................................................................................9

4.5 Համապատասխանությունը ԲԿՊ-ին...................................................................10

5. Գործողությունների Պլան հաջորդ փուլի համար.....................................................11

Նկարներ և Հավելվածներ.........................................................................................12
Վերապատրաստում Հաղթանակ ենթակայան 08.08.2017թ..............................................12
Վերապատրաստման դասընթացի մասնակիցների ցանկ...............................................13
Վերապատրաստում Աշնակ ենթակայան 16.10.2017թ.....................................................14
Հանրության իրազեկում Աշնակ ե/կ-ի շինարարական աշխատանքների վերաբերյալ..........15
Հանրության իրազեկում Վանաձոր-1 ե/կ-ի շինարարական աշխատանքների վերաբերյալ...16
Հավելված 1: Շինարարական թափոնների տեղափոխման պայմանագիր..........................17
Հավելված 2 Թափոնների վերաբերյալ հաշվետվություն...................................................19
Հավելված 3 Պայմանագիր՝ մասնագիտացված ընկերության հետ թափ ոնների հեռացման համար .................................................................................................................20
Հավելված 4 Թափոնների վերաբերյալ հաշվետվություն...................................................21
Մոնիթորինգային շրջայցեր աշխատանքների իրականացման տեղանք...........................22

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՕԳ Օդային գիծ

ՀԲ Համաշխարհային բանկ

ԾԻԳ Ծրագրի իրականացման գործակալություն

ԲԿՊ Բնապահպանական կառավարման պլան

ԲԿԾ Բնապահպանական կառավարման ծրագիր

ՀԿ Հասարակական կազմակերպություն

ԲԷՑ ՓԲԸ Բարձրավոլտ էլեկտրացանցեր փակ բաժնետիրական ընկերություն

1. **Ներածություն**

Բնապահպանական մոնիթորինգի այս կիսամյակային հաշվետվությունը ընդգրկում է 2017թ. հուլիսից մինչև դեկտեմբեր ընկած ժամանակահատվածը:
Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի շրջանակներում իրականացվում է

1. «Էլեկտրամատակարարման հուսալիության» ծրագիր՝ Լալվար-Նոյեմբերյան 110կՎ ՕԳ-ի փոխարինում
2. «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիր՝ 220/110/10 կՎ Աշնակ ենթակայանի վերակառուցում
3. «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիր 220/110/10 կՎ Հաղթանակ ե/կ-ի վերաակառուցում, 110/10/6 կՎ Վանաձոր-1 ե/կ-ի վերակառուցում և 110/10 կՎ Չարենցավան ե/կ-ի վերակառուցում

Շինարարական աշխատանքները սկսվել են միայն Աշնակ, Հաղթանակ և Վանաձոր-1 ենթակայաններում:

Վերոնշյալ ծրագրերը կբարձրացնեն էներգետիկ համակարգի աշխատանքի արդյունավետությունը և կկրճատեն էլեկտրաէներգիայի հաղորդման կորուստները, որոնք կարևոր են էլեկտրաէներգիայի մատակարարման անվտանգությունը բարելավելու և ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնելու համար: Գոյություն ունեցող ենթակայանների վերակառուցումը և ՕԳ-ի փոխարինումը կբարելավեն քաղաքի և գյուղի սպառողների էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիությունը և որակը՝ նվազեցնելով տարածաշրջանային անհամապատասխանությունները Հայաստանի ներսում՝ աջակցելով կայուն տնտեսական զարգացմանը: Ինչպես նաև՝ արդյունավետ և հուսալի էներգահամակարգը կխթանի միջսահմանային էներգիայի վաճառքի ընդլայնմանը տարածարջանում:

Համաձայն ՀԲ Օպերացիոն քաղաքականության 4.01 կետի՝ ծրագրերն ընկնում են բնապահպանական B կատեգորիայի մեջ:

Ծրագրի իրականացումն ու վերահսկումը իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից՝ որպես Ծրագրի Իրականացման Գործակալություն (ԾԻԳ):

2. **Շինաշխատանքներ և ծրագրի առաջընթացը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում**

Շինաշխատանքների կապալառուները՝ XIAN ELECTRIC ENGINEERING ընկերությունը՝ Վանաձոր-1 և Աշնակ ենթակայանների վերակառուցման համար (Պայմանագիր N HV-ESRAF-1/2015_1 առ՝ 01.07.2016), Kaskad–Energo ընկերությունը Հաղթանակ ենթակայանի վերակառուցման համար (Պայմանագիր N HV-ESRAF-1/2015_1 առ՝ 01.07.2016) և EFACEC ընկերությունը Չարենցավան-3 ենթակայանի վերակառուցման համար (Պայմանագիր N HV-ESRAF-1/2015_1 առ՝ 01.07.2016)՝ պետք է իրականացնեն ենթակայանների վերակառուցումը և ընդլայնումը:

110 կՎ Նոյեմբերյան-Լալվար ՕԳ-ի փոխարինման աշխատանքներն իրականացնելու համար Գլխավոր Կապալառու «Գամ Արաք» ընկերությունը վարձել է «Ռեդինեթ» ՓԲԸ-ին՝ որպես ենթակապալառու Պայմանագրի No: HV-W-1/2015/F/01 առ 15.11.2016:

Վերոնշյալ կապալառուները բոլորն էլ ունեն իրենց բնապահպանության մասնագետին:

«Հաղթանակ» ենթակայանի շինաշխատանքները մեկնարկել են 2017թ. մարտի 15-ից, «Աշնակ» ենթակայանի շինաշխատանքները մեկնարկել են 2017թ. հուլիսի 14-ից, «Վանաձոր-1» ենթակայանի շինաշխատանքները մեկնարկել են 2017թ. հուլտեմբերի 13-ից:

Գլխավոր կապալառները ուղարկում են իրենց ամսական բնապահպանական հաշվետվությունները ԾԻԳ-ին, որը դիտարկվում է ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետի կողմից:

ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետը իր հերթին իրականացնում է ամսական բնապահպանական մոնիթորինգային այցելություններ տեղանք, ստուգելու՝ աշխատանքների համապատասխանությունը ԲԿՊ-ին:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներն ընթացել են բնականոն հունով (նկարներ):

Իրականացվել են վերապատրաստումներ և հանրային իրազեկումներ սպասվող շին աշխատանքների վերաբերյալ (նկարներ):

Շինհրապարակներից շին. աղբը տեղափոխվել է համապատասխան աղբավայրեր (Հավելված 2 և 4):

Հաշվետու ժամանակահատվածում վթարներ և բողոքներ չեն արձանագրվել:

## 3. Դասընթացներ և Հանրային իրազեկում

### 3.1 [illegible]

08.08.2017թ-ին կազմակերպվել է կապալառուի անձնակազմի վերապատրաստման դասընթաց հետևյալ թեմաներով՝

- Բնապահպանական կառավարման ծրագիր_ԲԿԾ.
- Արտակարգ իրավիճակներ: Անձնակազմի պատրաստվածություն և վարքականոններ.
- Առողջություն և աշխատանքի անվտանգության պահպանություն.

Դասընթացին ներկա են եղել 18 մասնակից, այն եղել է բավականին արդյունավետ և ինտերակտիվ հարց ու պատասխաններով: Մասնակիցների գնացամատյանը և դասընթացի լուսանկարները ներկայացված են ստորև:

### 3.2 [illegible]

Հաշվետու ժամանակահատվածում Կապալառուն կազմակերպել էր հանրային իրազեկման հանդիպում Թալինի քաղաքապետարանում: Հանդիպումը տեղի է ունեցել օգոստոսի 11-ին: Հիմնականում քաղաքացիները, ՀԿ-ները և քաղաքապետարանների անդամները հետաքրքրված էին շինարարության ներկայիս ընթացքի, Ծրագրի իրականացման ժամանակացույցի և, ինչպես նաև հնչեցին որոշ հարցեր աշխատանքային ժամերի և բնապահպանական և կենսավտանգության նախատեսվող միջոցառումների վերաբերյալ, որոնք պետք է իրականացվեն Կապալառուի կողմից (հանդիպման նկարները ներկայացված են ստորև):

Բնապահպանական կառավարման պլանի և Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանի վերաբերյալ դասընթաց է իրականացվել 2017թ. հոկտեմբերի 16-ին Աշնակ ենթակայանի տարածքում: Միջոցառմանը մասնակցություն են ունեցել Կապալառու և ենթա-Կապալառու կազմակերպությունների բանվորական, վարորդնական և կառավարման անձնակազմը: Թրեյնինգ/դասընթացը կազմակերպվել է Կապալառուի բնապահպանական և անվտանգության թիմի կողմից: Սույն դասընթացի հիմնական նպատակն էր

- Սահմանել բնապահպանական համապատասխանության հասկացությունը
- Պարզաբանել, թե ինչ նշանակություն և կարեվորրություն ունի բնապահպանական համապատասխանությունը
- Պարզաբանել հիմնական պահանջները
- Կենսանվտանգության համապատասխանությունը և կանոնակարգերը
- Անվտանգության մակարդակի բարելավում; զրո պատահարների քաղաքականություն

- ԱԻԱՊ ներկայացում

Կազմակերպիչները երկար տարիներ այս կամ այն ծրագրերի շրջանակներում պատասխանատու են եղել բնապահպանական և կենսանվտանգության համապատասխանության կիրառմանը: Ուստի վերը նշված թրեյնինգը նոր մշակված ծրագիր չէ, այլ նպատակ է հետապնդում մանրամասն ծանոթացնել մասնակիցներին առավել կիրառական մեթոդների և գործիքների, որոնց միջոցով հնարավոր կլինի կազմակերպել և կառավարել բոլոր բնապահպանական պարտավորությունների իրականացումը ապահովվելով բնապահպանական համապատասխանատվությունը և անվտանգության ապահովման բարձր մակարդակը (նկարներ):

### 3.3 **Վանաձոր ե/կ**

Հաշվետու ժամանակահատվածում Կապալառուն կազմակերպել է հանրային իրազեկման հանդիպում Վանաձորի քաղաքապետարանում: Հանդիպումը տեղի է ունեցել դեկտեմբերի 25-ին: Հիմնականում քաղաքացիները, ՀԿ-ները և քաղաքապետարանների անդամները հետաքրքրված էին շինարարության ներկայիս ընթացքի, Ծրագրի իրականացման ժամանակացույցի և, ինչպես նաև հնչեցին որոշ հարցեր աշխատանքային ժամերի և բնապահպանական և կենսավտանգության նախատեսվող միջոցառումների վերաբերյալ, որոնք պետք է իրականացվեն Կապալառուի կողմից:

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածում կկազմակերպի և կիրականացվի վերապատրաստում Վանաձոր-1 ենթակայանում հետևյալ թեմաներով՝

- Բնապահպանական կառավարման ծրագիր_ԲԿԾ.
- Արտակարգ իրավիճակներ: Անձնակազմի պատրաստվածություն և վարքականոններ.
- Առողջություն և աշխատանքի անվտանգության պահպանություն:

## 4. Շրջակա միջավայրի մոնիթորինգ

### 4.1 Մոնիթորինգ

Հաշվետու ժամանակաշրջանում՝ մոնիթորինգային միջոցառումները իրականացվել են ըստ Մոնիթորինգային ծրագրի՝ հիմնված ՀԲ անվտանգության և ԲԿՊ պահանջների վրա: Մոնիթորինգային ծրագիրը ներառում է՝

- ✓ Յուրաքանչյուր ամիս կանոնավոր Մոնիթորինգային այցեր՝ ԲԿՊ պահանջների հետ՝ շինաշխատանքների համապատասխանությունը ստուգելու համար:
- ✓ Անհրաժեշտության դեպքում՝ չպլանավորված շրջայցեր
- ✓ Վիզուալ չափագրումներ ենթակայանում և օդի որակի, աղմուկի և վիբրացիայի բնապահպանական պարամետրերի մոնիթորինգ
- ✓ Մոնիթորինգային ստուգաթերթիկների լրացում և համապատասխանությունների և անհամապատասխանությունների ամփոփում
- ✓ Անհամապատասխանության գրառումները ներկայացնել Կապալառուին
- ✓ Կապալառուի ամսական մոնիթորինգի հաշվետվությունների դիտարկում:

### 4.2 Մոնիթորինգային շրջայց «Հաղթանակ» ենթակայան թերությունների հայտնաբերում և ուղղիչ միջոցառումներ

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2017թ. մարտի 15-ից: ԾԻԳ-ի բնապահպանության մասնագետը իրականացրել է ամսական բնապահպանական մոնիթորինգային այցելություններ տեղանք՝ ստուգելու աշխատանքների համապատասխանությունը ԲԿՊ-ին (նկարներ):

Իրականացված այցերի ժամանակ հայտնաբերվել են հետևյալ թերությունները, որոնք շտկվել են հաշվետու ժամանակահատվածում կատարված դիդողությունների հիման վրա

- Շինարարական մնացորդներ (բետոնի, մետաղի մնացորդներ), որոնք ըստ գլխավոր աշղեկի՝ կուտակված են հետագա օգտագործման կամ հեռացման համար
- Թերություն՝ Տեղանքում հայտնաբերվել է աղբի բավարար քանակություն:
  Ողղիչ միջոցառում՝ հաշվետու ժամանակահատվածում տեղափոխվել է համապատասխան աղբավայր (հավելված 1)
- Թերություն՝ Մի քանի այցերի ընթացքում շինարարական հրապարակը գտնվել է թափթփված վիճակում:
  Ողղիչ միջոցառում՝ Այժմ շաբաթական մեկ կամ երկու ժամով իրականացվում է շին հրապարակի մաքրում:
- Թերություն՝ Յուղի կաթոցներ ասֆալտին:

Ուղիչ միջոցառում՝ Պահպանել վառելիքաքսուկային նյութերի տեղափոխման լիցքավորման և պահեստավորման կանոնները՝ բացառելու համար արտահոսքը շրջակա միջավայր: Մասնավորապես շինարարության աշխղեկը հարահանգավորվել է առանձնացնել համապատասխան տարածք և ապահովել ավազաշերտ՝ պարբերաբար փոխելու և թարմացնելու նախապայմանով:

- Թերություն՝ Փոշու առաջացում աշխատանքների իրականացման տարածքում:
  Ուղիչ միջոցառում՝ Իրականացնել ջրցանման աշխատանքներ ենթակայանի այն տարածներում, որտեղ աշխատանքներ են իրականացվում: Օրվա ընթացքում առնվազն երկու անգամ:

Հաշվետու ժամանակահատվածում ենթակայանի տարածքից տեղափոխվել է 368 մ$^3$ աղբ (հավելված 2)

## 4.3 Մոնիթորինգային շրջայց «Աշնակ» ենթակայան թերությունների հայտնաբերում և ուղղիչ միջոցառումներ

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2017թ. հուլիսի 14-ից: Հաշվետու ժամանակահատվածում ԾԻԳ-ի բնապահպան Հասմիկ Խաչոյանը իրականացրել է ամսական բնապահպանական մոնիթորինգային այցելությունների «Աշնակ» ենթակայան (նկարներ):

Իրականացված այցերի ժամանակ հայտնաբերվել են հետևյալ թերությունները, որոնք նաև շտկվել են հաշվետու ժամանակահատվածում կատարված դիդողությունների հիման վրա:

- Թերություն՝ Տեղանքում հայտնաբերվել է աղբի բավարար քանակություն:
  Ուղիչ միջոցառում՝ հաշվետու ժամանակահատվածում տեղափոխվել է համապատասխան աղբավայր (հավելված 3)
- Թերություն՝ Մի քանի այցերի ընթացքում շինարարական հրապարակը գտնվել է թափթփված վիճակում:
  Ուղիչ միջոցառում՝ իրականացվում է շին հրապարակի մաքրում աշխատանքի ավարտից հետո:
- Թերություն՝ Յուղի կաթոցներ ասֆալտին:
  Ուղիչ միջոցառում՝ Պահպանել վառելիքաքսուկային նյութերի տեղափոխման լիցքավորման և պահեստավորման կանոնները՝ բացառելու համար արտահոսքը շրջակա միջավայր: Մասնավորապես շինարարության աշխղեկը հարահանգավորվել է առանձնացնել համապատասխան տարածք և ապահովել ավազաշերտ՝ պարբերաբար փոխելու և թարմացնելու նախապայմանով:
- Թերություն՝ Փոշու առաջացում աշ:ատանքների իրականացման տարածքում:

Ողղիչ միջոցառում՝ Իրականացնել ջրցանման աշխատանքներ ենթակայանի այն տարածներում, որտեղ աշխատանքներ են իրականացվում: Օրվա ընթացքում առնվազն երկու անգամ:

- Թերություն՝ Ենթակայանի տարածքում դեռ պահպանվում է քանդված ասբեստ պարունակ թիթեղներ
- Ողղիչ միջոցառում՝ Կիանձնվի թափոնների տեղափոխման, վերամշակման, պահպանման լիցենզիա ունեցող կազմակերպության հաջորդ հաշվետու ժամանակահատվածի ընթացքում:

Հաշվետու ժամանակահատվածում ենթակայանի տարծքից տեղափոխվել է 1594մ$^{3}$ աղբ (հավելված 4)

## 4.4 **Մոնիթորինգային շրջայց «Վանաձոր-1» ենթակայան թերությունների հայտնաբերում և ուղղիչ միջոցառումներ**

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2017թ. հուկտեմբերի 13-ից: Հաշվետու ժամանակահատվածում ԾԻԳ-ի բնապահպան Հասմիկ Խաչոյանը իրականացրել է ամսական բնապահպանական մոնիթորինգային այց «Վանաձոր-1» ենթակայան (նկարներ):

Իրականացված այցի ժամանակ հայտնաբերվել են հետևյալ թերությունները, որոնք շտկման փուլում են:

- Թերություն՝ Տեղանքում հայտնաբերվել է աղբի բավարար քանակություն:
  Ողղիչ միջոցառում՝ կտեղափոխվի համապատասխան աղբավայր մասնագիտացված ընկերության հետ թափոնների հեռացման Պայմանագիր կնքելուց հետո:
  Թերություն՝ Աշխատողներ առանց սաղավարտի
  Ողղիչ միջոցառում՝ Ապահովել աշխատողներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանքով
  Թերություն՝ Նախազգուշացնող նշանների բացակայություն
  Ողղիչ միջոցառում՝ նախազգուշացնող նշանների տեղադրում:

Հաշվետու ժամանակահատվածում ենթակայանի տարծում կուտակվել է 100մ$^{3}$ աղբ, որը կտեղափոխվի համապատասխան աղբավայր մասնագիտացված ընկերության հետ թափոնների հեռացման Պայմանագիր կնքելուց հետո:

## 4.5 **Համապատասխանությունը ԲԿՊ-ին**

Ենթակայաններում աշխատանքերը և ուղղիչ միջոցառումները իրականացվել են համապատասխան բնապահպանական կառավարման պլանների, և դրանց համապատասխանությունը պարբերաբար վերահսկվում և զեկուցվում է:

5. **Գործողությունների Պլան հաջորդ փուլի համար**

- Բնապահպանական մոնիթորինգային շրջայցեր տեղանք (Գլխավոր կապալառու, ԲԷՑ ՓԲԸ)
- Բնապահպանական մոնիթորինգային վերահսկողություն (ԲԷՑ ՓԲԸ)
- Ամսական բնապահպանական հաշվետվության պատրաստում (Գլխավոր կապալառու)
- Դասընթացներ ԲԿՊ-ի, առողջության և անվտանգության վերաբերյալ (Գլխավոր կապալառու)
- Շինարարական աշխատանքների մեկնարկ «Չարենցավան-3» ենթակայանում և Լալվար-Նոյեմբերյան ՕԳ-ի տեղանքում (Գլխավոր կապալառու, ԲԷՑ ՓԲԸ)
- Դիտարկել և հաստատել Կապալառուի ամսական առաջընթացի հաշվետվությունը (Գլխավոր կապալառու)
- Արարողակարգային այլ խնդիրներ, ինչպիսիք են՝ չնախատեսված այցեր տեղանք, հայտնաբերված թերությունների շտկում, Կապալառուի փաստաթղթերի դիտարկում և հաստատում և այլն (Գլխավոր կապալառու)
- Հաշվետվություն շրջակա միջավայրի պահպանման մեթոդների վերաբերյալ (Գլխավոր կապալառու)
- Համապատասխան թույլտվությունների ձեռք բերում (Գլխավոր կապալառու, Վանաձոր-1 ե/կ թափոնների տեղափոխման թույլտվություն)

**[illegible]**

**[illegible] 08.08.2017թ.**







## Վերապատրաստման դասընթացի մասնակիցների ցուցակ



**Վերապատրաստում [illegible] 16.10.2017 թ.**









Հանրության իրազեկում Աշնակ ե/կ-ի շինարարական աշխատանքների վերաբերյալ









## Հանրության իրազեկում Վանաձոր-1 ե/կ-ի շինարարական աշխատանքների վերաբերյալ








## Հավելված 1: Շինարարական թափոնների տեղափոխման պայմանագիր

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Կէ-65/1
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք.Երևան «02» հոկտեմբերի 2017 թ.

**«Կասկադ էներջի»** ՍՊԸ Հայաստանի մասնաճյուղը, այսուհետ՝ **«Պատվիրատու»**, ի դեմս տնօրեն Դ.Ֆահրադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և
**«Դավարս»** ՍՊԸ-ն, այսուհետ՝ **«Կատարող»**, ի դեմս տնօրեն Ա.Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,
հետագա շարադրանքում միասին անվանվելով «Կողմեր», իսկ յուրաքանչյուրը առանձին՝ «Կողմ», կնքեցին Ծառայությունների մատուցման սույն պայմանագիրը, այսուհետ՝ **«Պայմանագիր»**, հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողը ընդունում է Պատվիրատուի արտադրական թափոնները աղբի դաշտ, իսկ Պատվիրատուն աղբի թափոնների ընդունման համար վճարում է Կատարողին՝ Պայմանագրի 4-րդ կետում սահմանված չափով և կարգով:

### 2. Պատվիրատուի իրավունքներն ու պարտավորությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի օգտվել դաշտի տարածքում գտնվող Կատարողի սանիտարական հրապարակից և իրականացնել աղբ փոխադրող մեքենաների լվացում:
2.2 Պատվիրատուն պարտավոր է շին. թափոնները փոխադրելիս պահպանել սանիտարահիգիենիկ նորմերը ՀՀ օրենսդրությանը համաձայն:
2.3 Պատվիրատուն շին. աղբը դաշտ է հասցնում ստորև նշված տրանսպորտային միջոցներով.

| Մակնիշը | ԿԱՄԱԶ | ԶԻԼ |
|---|---|---|
| Հաշվառման համարանիշը | 23 CC 002 | 34 ST 420 |
| Գույնը | Նարնջագույն | Երկնագույն |
| Նույնականացման համարը | XTC551110K0012234 | 2060021 |
| Թողարկման տարեթիվը | 1989 | 1982 |

2.4 Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի համաձայն ինքը վճարել բնապահպանական վճարները:
2.5 Պատվիրատուն Պարտավոր է մատուցված ծառայության համար Կատարողին վճարել սույն պայմանագրի 4-րդ կետում սահմանված չափով, կարգով և ժամկետում:

### 3. Կատարողի իրավունքներն ու պարտականությունները

3.1 Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջելու սույն պայմանագրի 2.2 – 2.5 կետերի անշեղ կատարում:
3.2 Սույն պայմանագրի 2.2 – 2.5 կետերին չհետևելու դեպքում Կատարողը կարող է մերժել Պատվիրատուի շին.թափոնների ընդունման հետ կապված ծառայությունների մատուցումը:

### 4. Պայմանագրի գինը, վճարման կարգն ու ժամկետները

4.1 Պայմանագրի գինը 1 խմ աղբի ընդունման համար կազմում է 125 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:
4.2 Ընդունված աղբի ծավալը հաշվարկվում է դաշտ մուտք գործած մեքենաների երթերի քանակի հիման վրա, ընդունելով, որ ԿԱՄԱԶ մեքենայի մեկ մուտքի դեպքում բեռնաթափվում է 8խմ, իսկ ԶԻԼ մեքենայի մեկ մուտքի դեպքում՝ 5 խմ աղբ:
4.3 Յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 5-ը Կողմերի միջև կազմվում է տվյալ ամսվա ընթացքում մատուցված ծառայության վերաբերյալ համեմատական ակտ՝ Կատարողի կողմից մատուցված ծառայությունների արժեքի նշմամբ:
4.4 Համեմատական ակտը ստորագրելուց հետո՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 8-ը Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում համապատասխան հաշիվ-ապրանքագիր:

4.5 Մատուցված ծառայության համար վճարումը կատարվում է ամենամսյա կարգով՝ սույն պայմանագրի 4.3 և 4.4 կետերում նշված կարգով կազմված փաստաթղթերի հիման վրա, մինչև ընթացիկ ամսվա հաջորդող ամսվա 10-ը՝ փոխանցում կատարելով Կատարողի բանկային հաշվեհամարին:

## 5. Ծառայությունների մատուցման ժամկետները

5.1 Կատարողն ընդունում է Պատվիրատուից շին թափոններ ք.Երևան,Սպանդարյան արդյունաբերական հանգույց (նախկին խճաքարերի հանք) հասցեում գտնվող դաշտում, առավոտյան ժամը 8.00 մինչև երեկոյան ժամը 18.00: Շին թափոնների ընդունման ժամը կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Սույն պայմանագրի 4.5 կետով նախատեսված վճարման ժամկետի խախտման դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջելու վճարել տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1%-ի չափով: Երեք ամսվա ընթացքում Պատվիրատուի կողմից Կատարողին հասանելիք գումարի և տույժի չվճարման դեպքում Կատարողն իրավունք ունի կանգնեցնելու շին. թափոնների ընդունումը ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով և դիմելու դատական ատյաններ:

6.2 Պատվիրատուին անհիմն մերժման դեպքում կատարողը վճարում է տույժ 10.000 ՀՀ դրամի չափով:

6.3 Տույժերի վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունների կատարումից:

## 7. Վիճելի հարցերի և տարաձայնությունների լուծումը

7.1 Վիճելի հարցերի և տարաձայնությունների առաջացման դեպքում Կողմերը կգործադրեն բոլոր հնարավոր ուժերը դրանք բանակցությունների միջոցով լուծելու համար:

7.2 Վիճելի հարցերով համաձայնության չգալու դեպքում Կողմերը կգործեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 8. Հատուկ պայմաններ

8.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում «02» հոկտեմբեր 2017թ.-ից և գործում է մինչև «31» դեկտեմբերի 2017թ.:

8.2 Կողմերից յուրաքանչյուրը կարող է լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս կողմին այն լուծելուց առնվազն մեկ ամիս առաջ:

8.3 Սույն պայմանագրի գործողության ավարտից հետո, եթե Կողմերի միջև չկան տարաձայնություններ և կողմերից որևէ մեկը ցանկություն չի հայտնում Պայմանագիրը լուծելու վերաբերյալ, ապա Պայմանագրի գործողությունը շարունակվում է անորոշ ժամկետով:

8.4 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 2 օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

## 9. Կողմերի հասցեները և բանկային վավերապայմանները

| *ԿԱՏԱՐՈՂ* | *ՊԱՏՎԻՐԱՏՈՒ* |
|---|---|
| «Դավարս» ՍՊԸ | «Կասկադ էներգո» ՍՊԸ Հայաստանի մ/ճ |
| Ավան. Չարենց թ. 18 շ. բն. 1 | ք.Երևան, Խորենացու փող.33շ. 5-րդ հարկ |
| ՀՎՀՀ 00848189 | ՀՎՀՀ 00470272 |
| «Արարատբանկ» ԲԲԸ Ավան մ/ճ | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 1510034891510100 | Հ/Հ 11500137144871 |
| ՏՆՕՐԵՆ ______ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ՏՆՕՐԵՆ ______ Դ.ՖԱՀՐԱԴՅԱՆ |

**Հավելված** 2 **Թափոնների վերաբերյալ հաշվետվություն՝ Հաղթանակ ե/կ**

| Ամսաթիվ Data | Type of waste/թափոնի տեսակ | Removed waste (m3)/հեռացված թափոն (մ3) | | | Remarks/Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| | | Previous month/նախորդ ամիս | Current month/ընթացիկ ամիս | Total for year/ամբողջ տարվա ընթացքում | |
| 31.12.2017 | Construction waste/շին. աղբ | 200մ³ | 168 մ³ | 368 մ³ | Տեղափոխվել է համապատասխան տեղանք |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

## Հավելված 3 Պայմանագիր՝ մասնագիտացված ընկերության հետ թափ ոնների հեռացման համար

Պայմանագիր N 17

Կոմունալ ծառայությունների ձեռք բերման

ք. Թալին

« 17 »« 07 » 2017 թ.

ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ը, /Պետ ռեգիստրի գրանցում 94.210.00555 21.01.2011թ ՀՎՀՀ 05304749/ այսուհետ կատարող ի դեմս տնօրեն **Գ.Գրիգորյանի**, , որը գործում է ՀՀ գործող օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից՝ և

Ախուրյանի ,,Կոոպշին,, ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Հ.Տոնոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, հասցեն՝ ք.Գյումրի Թբիլիսյան խճ.1 ՀՎՀՀ 05801184 այսուհետ «Պատվիրատու»՝ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կատարողը պարտավորվում է**՝ իր ուժերով և միջոցներով իրականացնել Պատվիրատուի ք.Թալին Գայի 77 հասցեում Աշնակ ենթակայանի տարածքում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով առաջացած շինարարական աղբի հավաքման, տեղափոխման և աղբյուսներում թափոնների տեղադրման աշխատանքները,

1.Պատվիրատուն **պարտավորվում** է՝ Մեծածավալ շինարարական աղբը տեղակայել փոխադրման համար մատչելի տեղում նպաստավոր վիճակում: Կատարողին աղբը տեղափոխելու մասին տեղեկացնել նախօրոք:

Պատվիրատուն պարտավորվում է աղբի տեղափոխման համար վճարել _______________ ՀՀ դրամ Աղբահանությունը ժամանակին չկատարելու դեպքում Պատվիրատուին իրավունք է տրվում միակողմանի դադարեցնել պայմանագիրը՝այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս Կողմին:

Կողմերի իրավաբանական հասցեները

| Կատարող | Պատվիրատու |
| --- | --- |
| ,,ԹԱԼԻՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ,, ՀՈԱԿ | Ախուրյանի ,,Կոոպշին,, ՍՊԸ |
| Հասցեն ք.Թալին Գայի 1 | Հասցեն՝ ք.Գյումրի Թբիլիսյան խճ 1 |
| Բանկը՝ ԱՇԻԲ Թալին մ/ճ | Բանկը՝ ԻՆԵԿՈ բանկ Գյումրի մասնաճյուղ |
| ՀՀ 2476000740220010 | ՀՀ 205012200619 |
| ՀՎՀՀ 05304749 | ՀՎՀՀ 05801184 |
| Տնօրեն ________ Գ.Գրիգորյան | ________ Հ.Տոնոյան |

**Հավելված 4 Թափոնների վերաբերյալ հաշվետվություն՝ Աշնակ ե/կ**

| Ամսաթիվ Data | Type of waste/թափոնի տեսակ | Removed waste (m3)/հեռացված թափոն (մ3) | | | Remarks/Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| | | Previous month/նախորդ ամիս | Current month/ընթացիկ ամիս | Total for year/ամբողջ տարվա ընթացքում | |
| 31.12.2017 | Construction waste/շին. աղբ | 1594մ³ | 0 | 1594մ³ | Տեղափոխվել է համապատասխան տեղանք |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

## Մոնիթորինգային շրջայցեր աշխատանքների իրականացման տեղանք

## Հաղթանակ ե/կ









Աշնակ ե/կ









**Վանաձոր-1 ե/կ**





